# Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ



## ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ընդունելություն 1947-48 ուս. տարվա 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի համար:

Առաջին կուրս կարող են ընդունվել 7-րդ կամ 8-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները:

Երկրորդ կուրս՝ 9-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները:

Երրորդ կուրս՝ 10-րդ դասարանի կրթություն և 18-ից ոչ պակաս տարիք ունեցող տղաները:

Առաջին կուրս ընդունվողները ենթարկվում են քննության հետևյալ առարկաներից.—

Հայոց լեզու (բանավոր և գրավոր), ռուսաց լեզու (բանավոր և գրավոր), մաթեմատիկա (բանավոր և գրավոր):

Երկրորդ և երրորդ կուրս ընդունվողները՝ (բացի վերոհիշյալ առարկաներից) նաև Հայոց պատմություն, Հայ եկեղեցու պատմություն, գրաբար և անգլերեն լեզու: Տասնամյա կրթություն ունեցողներն ազատվում են Հայոց լեզվի, ռուսաց լեզվի և մաթեմատիկայի քննություններից:

Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է. ուսանողներին տրվում է ձրի կրթություն և ամեն հարմարություն (հագուստ, սնունդ, կրթական պիտույք, անկողին):

Դիմումներն ընդունվում են մինչև օգոստոսի 25-ը, ամեն օր ժամը 9-14-ը:

Դիմումի հետ պետք է ներկայացնել 1) ինքնակենսագրություն, 2) ուսման վկայական, 3) ծննդյան վկայական, 4) առողջության և ծաղկի պատվաստման վկայական, 5) 3 լուսանկար (3×4):

Քննությունները սկսվելու են օգոստոսի 26-ին:

Դիմումները տրվում են Հոգևոր Ճեմարանի վերատեսչի անունով (անձամբ կամ փոստով):

Հասցեն՝ Էջմիածին, Հոգևոր Ճեմարան (հեռ. 1-20):

Պատվեր 1090
ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ. վարչության № 2 տպարան, Երևան